

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ, Ապտին փողոց
ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ճիշտ դիմաց
Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
LeCaire, rne Abdine
vis-à vis du «Mokattam»

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ
ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԷԿ անգամի անկի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
ՆԳԻՏՏՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	ՂՂ. ողջ 100
Վեցամսեայ	» 55
Եռամսեայ	» 30
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Պր. 26
Վեցամսեայ	» 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ
ԽՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄՍ
ՈՒՆԻ ԵՂ ԳՐՈՒԹԻՒՆ
ՊՐԻՆՏԵՐ

ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆԵՐԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԹ ՕՐԵՐԸ
Տնօրեն-Խմբագիր Յ. ԱՆՓԻՄԻ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ինչպէս արդէն մեր առաջին թուով
ծանուցած ենք, «Փարոս»-ի տնօրէնու-
թիւնը իր բոլոր ուղարկութիւնը և
ժամանակը թերթին խմբագրութեան
և անոր զարգացման նուիրել կարե-
նալու համար, այս անգամ մատու-
կարարութեան ճիշդ բոլորովին զա-
տած է խմբագրութենէն. Գաղափար
պատուաւոր սեղանաւորներէն ՄԵԾ.
ՍԱՐԳԻՍ ԷՅ. ՄԻՐԱՆԵԱՆ բարե-
հաճած է ստանձնել այդ ճիւղը. Հե-
տեաւար այսօրուրն է սկսեալ «Փա-
րոս»-ի հին և նոր բաժնեգրներու
և վճարեալ հրատարակութեանց այն
ստացականները միայն վաւերական
են՝ որոնք տնօրէնութեանս կնիքը և
միւսնոյն ատեն Միւրանեան էֆէնտի
ստորագրութիւնը կը կրեն:

Միւրանեան էֆէնտի գործատեղին
է ի Պապ-Էլ-Խալի, Կառավարչա-
կան պալատան դիմաց:

AVIS IMPORTANT
La direction du «Pharos» a l'hon-
neur de porter à la connaissance de
ses abonnés et du public en général,
qu'ayant confié l'administration du
journal à M. SARKIS MIRANIAN, à
Bab el Khalk, en face du Gouverno-
rat, tous les reçus tant pour les a.
bonnements que pour les annon-
ces doivent porter la signature
de l'Administrateur conjointement
avec le cachet de la Direction.

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ

Կը փափաքեմ հաւատալ որ վար-
ժարանք և մամուլը կոչուած են մեր
ազգային գոյութեան պահպանումին
գլխաւոր ստորակներն ըլլալ:

Հայ Ժողովուրդը իր հայրենիքը
կորսնցուցած է դարերէ ի վեր. այ-
սօր, մեր ազգութիւնը կորսնցնելու
վտանգէն երկու մատ հեռու ենք:

Ամենքս ալ գիտենք թէ ազատ
հայրենիքն է որ ոչ միայն կ'ապա-
հովէ ազգային գոյութեան պահպա-
նումը, այլ նաև անհրաժեշտ ու բա-
ւարար պայմանը կը կազմէ ցեղին
կարողութեանց զարգացման և իր
ճակատագրին կատարման: Ազատու-

թիւնն է որ կը կազմէ այն բերրի
հողը ուր հանճարը կը սիրէ փթթիլ
և Արեւմտեան Մտածումի իմաստասի-
րութիւնը մեզ կը սորվեցնէ թէ ա-
նոնք են որ քաղաքակրթութեան դէպ
ի տիեզերական զիտակցութիւնն յա-
ւալխազարացումին այլազան հանգը-
ւանները նշանակած են:

Բայց, հիմա, ազգային գոյութիւնն
իսկ է որ կը սասանի, որ կ'սպառ-
նայ փրկել, հին ու արեւայական պա-
լատի մը պէս: Տեղի կայ ուրեմն յա-
րատեալով հանդերձ դէպ ի մեծ խո-
տիւն իրականացման ձգտող հաւա-
քական ճիւղը, խորհիլ իրականութիւ-
նը ամուր հիմերու վրայ հաստատե-
լու միջոցներուն:

Արդարեւ ընդհանուր ու միակ խո-
տի մը մշտավառ լոյսն է որ կ'ոտո-
րակեալ ու ցրուեալ հայութեան միու-
թիւնը պիտի կազմէ: Արդ, վարժա-
րանը և մամուլն է որոնց վրայ պար-
տականութիւնը կը ծանրանայ այդ
լոյսին հաղորդ ընելու հայութեան
այլազան կոտորակները իրենց բոլոր
դասակարգերով:

Այսպէս իրարմէ այնքան հեռու
որքան տեղային միջավայրին իրարմէ
տարբեր կեդրոններուն մէջ հաստատ-
ուած հայ գաղութները, պիտի կըր-
նան, ընդհանուր ուղղութեան մը հե-
տեւող վարժարաններուն և ընդհա-
նուր սկզբունքներէ առաջնորդող
մամուլին շնորհիւ, պահպանել իրենց
ընդհանուր հանգամանքը որ ճշդիւ
ազգութեան յատկանշականը կը կազ-
մէ և թէպէտ մեկուսացեալ ու տարան-
ջատ նիւթականապէս, պիտի ձեւաց-
նեն համերաշխ միութիւն մը, տեսակ
մը բարոյական հայրենիք մը:

Ուրեմն, դերը զոր կոչուած է կա-
տարել մանաւանդ մամուլը ճշմար-
տապէս հայրենասիրական է ու պար-
տականութիւնը որ կը ծանրանայ ա-
նոր գործաւորներու վրայ ճշմարտա-
պէս նուիրական է:

Այսօր իւրաքանչիւր հայ գաղութ
իր մամուլը ունի և մեր թերթերուն
յարաճին երեւման մասին հեռու եմ
գիտէմ ըլլալ: Մտաւորական կեն-
սականութեան նշան մըն է և այն
կռիւները, կիրքով համակուած, որոնք
կը գրաւեն անոնց սինակները, կեան-
քի, շարժումի, աղուր ու մխիթա-

րական երևոյթը պիտի ընծայէին ե-
թէ վարուած ըլլային ընդհանուր շա-
հին մտահոգութենէն: Իրազրութիւնը
արդէն, իր սկզբնական շրջանին մէջ
է գեռ մեր մէջ, և, պէտք է յու-
սալ հաստատօրէն թէ, հանդարտ
մտածումի սովորութիւնը պիտի ընդ-
հանրանայ մեր մէջ ժամանակին ըն-
թացքով և քաղաքական դաստիար-
ակութեամբ: Ըսել չիմ ուզեմ թէ
անոնք պարտին հաւասարապէս խոր-
հիլ և զգալ միեւնոյն եղանակով:
Ասիկա անկարելի է և յետոյ անօ-
գուտ: Մարդիկ կան որոնց ըով իմա-
ցականութիւնը ստորադաս է զգայ-
նութեան և փոխադարձաբար: Աս-
կից կը հետեի որ ծրագրի մը մշա-
կութեան կամ գործի մը կատարման
մէջ մտածումին կամ կամքին ամեն
երանգի ներկայացուցիչներուն գոր-
ծակցութիւնը յաջողութեան էական
պայմանը կը կազմէ: Չենք գիտեր
թէ, արդարեւ, գաղափարներու ընդ-
հանրութենէ որ կը ժայթքի ճշմար-
տութիւնը: Ահաւասիկ ինչու համար
պիտի ուզէի որ, մեր Մամուլը իր
անդամներուն մէջ հաշուէր մարդ-
կային մտածման երկու հոգեբանա-
կան-պատմական գլխաւոր ձեւերը —
ազատականութիւն և պահպանողա-
կանութիւն: Առաջինին լաւատեսու-
թիւնը պիտի համաձայնուէր երկրոր-
դին յոռետեսութեամբ և միջին ճը-
մարտութիւնը պիտի լուսափայլէր գա-
ղափարներու ճակատամարտին մէջէն:

Ա. Ճ.

ԳԼԻՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԵՆ

ԲԵՐՈՒՋ

Բերայի մէջ 1893ին, եթէ ոչ օրուան,
բայց ապահովապէս գիշերուան ամենէն ծա-
նօթ դէմքերէն մէկն էր Բերուզ:

Կիսաշխարհեան շրջանակներու մէջ ար-
դէն անուն մը շինած էր իրեն և իր ձեռ-
քը չի ողորմող երիտասարդը կը նմանէր
այն ծերունիին որ... Երուսաղէմ չէ գա-
ցած:

Բերուզին գեղեցկութիւնը ամենուն բե-
րանը և իր լուսանկարը՝ ամենուն զրպա-
նին մէջն էր:

Բերուզը հոս, Բերուզը հոն:

Բերուզին թուալէթները, dessousները,
տէքսթիլներ, ընդունելու եղանակը, խօսակ-
ցութիւնը, սենեակին շէք կահաւորումը համ-
բաւ մը շինած էին իր անուան շուրջը, և
«ապրող» երիտասարդները անսակ մը հը-
պարտութեամբ կը պաամէին իրենց... Ե-
րուսաղէմ երթալը:

Ուստացնացութեան փափաքին սրղը ըս-
կաւ շարժիլ ներսիդիս:

Իրիկուն մը պարահանդէս կար Գոնքոր-
տիայի մէջ:

Օթեակի մը թաւիշին կոթնած, իր բը-
սան և հինգ տարիներու թարմութեամբ և
ախորժաբեր գեղեցկութեամբ կը ճառա-
գայթէր հայ քօքօթը:

Չինքը մօտէն ճանչցող բարեկամ մը
խնդրեցի որ իրեն ներկայացնէ զիս:

— Ի՞նչ կ'ըլլայ, ըսի, լուսադար կ'ըլ-
լանք քեզի հետ, ամօթ է:

— Je t'écoute, պատասխանեց բարե-
կամ և կիս ժամէն ետքը աշխարհիս լա-
ւազոյն բարեկամներն էինք ես և Բերուզ:

— Մանքիմ գէշ խելք չէ, բան մը ըլլար
նէ կուտէի:

— Գալէ՛ նիքօլին երթանք:

Քառորդ մը չանցած, արդէն կէս կէս
երկրտասնեակ քստրէ լափած էինք, ինքն
ու ես:

Կառսօնը կը հարցնէ թէ ի՞նչ կը խը-
մենք:

— Հէյտսիք Մօնօբալ մը, կը հրամայեմ:
Գեղափոխուր հեղուկէն արդէն քանի մը
զաւաթ խմած էինք երբ Բերուզ անհան-
գիստ զգաց ինքզինքը:

— Ի՞նչ կ'ըլլա՞ կոր, խուշո՞:

— Սիրտս կը խառնուի կոր, չի յոռեմ,
կերակուրի վրայ «կազօզ» խմելու աղքատ
եղած չեմ տէ...:

Կազօզ... Հէյտսիք Մօնօբալ, merci:
Չեզի բան մը ըսեմ ես. Հայ կիները
շնորհքով պատուաւոր կրնան ըլլալ, բայց
միտքերին անպատիւ ըլլալ զնեւուն պէս,
միշտ անշնորհք պիտի ըլլան:

Այս յատկութիւնը Աստուած առած չէ
իրենց:

Վա՛յ Բերուզ, վա՛յ. ասանկ հէ՛, Հէյտ-
սիքի շամբանեան կազօզի տեղ անեմ...:

Ահա ինչու կերակուրէն անմիջապէս ետ-
քը զատուեցայ իրմէ, նոյն իսկ... Ետքա
չի գացած:

Թ. Ա.

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ
ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԵԻԹԵՒԷ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ՋԱԲԹԻԹԷԻ ՇԷՆԲԸ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Վերջի շարժումն «Փարոս»-ի անկա-
նուն հրատարակությունը՝ բացատրություն
մը կը կարօտի, կզգանք:

Թերթին անօրէնութիւնը սրեւ կերպով
պատասխանատու չի կրնար սեպուիլ այդ
յայտագրման համար, քանի որ իւր կամքէն
բոլորովին անկախ պատճառներ ծնունդ տը-
ւած են այդ անկանոնութեան որովհէ՛ ըն-
թերցողներէն աւելի, մենք գիտէինք մնացած
ենք:

Թող ներքին մեզ ուրեմն երկու առիթով
բացատրել այդ ամենը, մեր ընթերցողնե-
րուն ուրախալի լուրեր տայէ առաջ:

«Փարոս»-ի բաժանորդներուն ծանօթ է
արդէն, թէ Թերթին 33րդ. թիւէն սկսեալ,
հարկ եղաւ մեր տպագրական մասը
յանձնել Դարբինեան տպարանին, ուր տեղ-
ւոյ և տարբեր շատ մը անյարմարու-
թեանց երեսէն, շատ գիտաբանութիւններով
կրցանք հրապարակ հանել մեր վերջի երեք
թիւերը:

Այնչափ երկուշարժի օր ոսկայն, այդ-
պէս ալ շարունակել կարելի չեղաւ, գրաշու-
րաց յանկարծ բացակայութեան պատճառաւ
որոնց տեղ ուրիշ գրաշարներ չէինք կրնար
աշխատեցնել, գոնէ մէկ հատ մը տրամադրելի
չի գտնուելուն համար ամբողջ Եփեսոսի մէջ:

Ձոհողութեան մը պէտքը անհրաժեշտ էր:
Եւ չի կեցանք մեր պարտքը կատարել:

Հետեւեալ մեզի յատուկ տպարան մը
ձեռք անցուցինք և նախկին գրաշարներու
հետ պայմանաւորելով, կարող եղանք վեր-
ջապէս կազմակերպել տպարան մը ուր
այսուհետեւ «Փարոս» պիտի հրատարակուի
անխափան:

Երբեմն չարիքէ բարիք կը ծնի. այս ա-
ռածին ամենէն նոր ապացոյցն է մեր արդի
կարգադրութիւնը:

Այս առթիւ անտեղի չենք մարիւր պա-
պանակել այն ամեն չար խղճները, որ
տեսակ տեսակ ժամբօքիւղ լուրեր տա-
րածեցին հոս ու հոն:

«Փարոս»-ի նիւթական կացութիւնը մի-
անգամայն ընդ միշտ հաստատ հիմքու
վրայ դնելու նպատակով մեր վերջին կար-
գադրութիւնը, որով Թերթին խմբագրութիւ-
նը և մատակարարութիւնը կանխատեսեցին
ճիշդ յանձնելով ճաղաքիս պատուաւոր ու-
ղանաւորներէն Տիար Սարգիս Միրանեանի,
կարծել տուեւր է շատերուն թէ՛ ատիկայ ար-
գիւնք էր լրագրոյս յոգի կացութեան և անձ-
ուկ վիճակին:

Ընդհակառակը «Փարոս» այնքան փայլուն

չէ եղած որքան այսօր և հպարտութեամբ
կը յայտարարենք թէ՛ Թերթը մէկ միլլիմ
չի պարտիր ոչ օրի:

Ինչպէս արդէն ըսած ենք Թերթին Տէր
և Տիարներ Թերթին թէ՛ գրական և թէ՛
նիւթական հոգեբը չէր կրնար ստանձնել
միեւնոյն ատեն:

Աշխատութեան բաժանումը հարկ մըն էր,
որմէ կարելի չէր ճողոպրել: Եւ արդէն այդ
սկզբումս ճամբայ ելած էինք և այսպէս ալ
ծանուցած մեր առաջին թիւին մէջ:

Տիար Ս. Միրանեանի անունը գրաւ-
կան մըն է այն բարեխառնութեան որուն կը
ցանկանք և որուն համար կը շնորհաւո-
րենք մենք զմեզ:

Տիար Ս. Միրանեան իր գովելի աշակ-
ցութիւնը մեզ նուիրելով, հիմնական այն-
պիսի պայմաններ կը նուիրէ Թերթին շա-
րունակութեան համար որմէ մեր պաշտօ-
նակիցներու շատերը թէ՛ հոս և թէ՛ այլուր,
պարզապէս պիտի նախանշէին: Ուստի մեր
ընթերցողները լայն հաւատ մը կրնան ու-
նենալ այն ապագային վրայ որու սահման-
ւած է «Փարոս»:

Ուրիշ զրոյց մըն ալ շրջուլ հարկը կըզ-
գանք այս օր:

Այսուհետեւ և շրջապատներու աշխար-
հին մէջ կըսեն եղբւր թէ Տիար Ն. Աղա-
զարմ, Առաջնորդարանի յարգելի Դիւանա-
պետը, այս կամ ա՛յն ձեռով ազդեցութիւն
կը բանեցնէ եղբր Թերթին ուղղութեան վը-
րայ և կամ կաշխատի եղբր Առաջնորդարա-
նի օրկանը ընել մեր լրագրէր:

«Փարոս» ազատ և անկախ ըլլալ այն-
քան կը սիրէ որ որեւէ գնով ձեռքէ հանել
չպիտի ուզէր իր՝ ամենուին կողմէ գնահատ-
ուած այդ երկու յատկութիւնները:

Եւ ճիշտ կ'երթան կուգան անանկ ա-
նուն մը մէջտեղ կը նետեն, Առաջնորդա-
րանը, որուն եթէ քննադատելի կողմերը գրեւ
արգելուէր մեզի, շատոնց մեր գրիչը մէկդի
նետած և հրապարակէն քաշուած էինք:

Սկիզբէն ի վեր մեր նպատակը եղած է
հանրային օգուտին համար աշխատել, մեր
այդ ուղղութիւնը՝ Առաջնորդարանի բարե-
կամ ըլլալով չէ որ պիտի կրնայինք ցոյց
տալ:

Ուրիշ անգամ ըսած ենք, նորէն կը
կրկնենք այժմ. ո՛չ մէկ ոյժ չենք ճանչնար
մենք որ արգելի մեզի մեր ո զածը ըսելէ
երբ մեր ըսելիքին գիտակցութիւնը ունինք:

Մեր սկզբունքը փոխել տալ ոչ՝ Առաջ-
նորդարանին արուած է և ոչ ալ անոր Դի-
ւանապետին:

Ինականօրէն, Առաջնորդարանի բար-
տուգարը չէ որ պիտի պաշտպանէ Թերթ

մը որ ազգային շրջանակներու աչքին լոյ-
սը չէ ապահովապէս:

Ուստի կը փութանք յայտարարել թէ
«Փարոս»ը «Փարոս» կը մնայ, այնպէս
ինչպէս որ ճանչցած են զինքը անցեղոյն
մէջ. ազատ, անկախ և հայ լրագրութեան
պատիւ բերող Թերթ մը որուն օգտակա-
րութիւնը աւելցնել մեր ամենօրեայ ջան-
քերուն ամենէն սիրելին է:

Յ. ԱՎՓԻՍԻ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ ՓԱՐՈՍ ԷՐԱԳՐԻ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Աղեքսանդրիոյ Թաղական Խորհրդոյ կող-
մէ անուղղակի կերպով մեզ տրուած հեր-
քումին հակառակ, արտօնեալ ենք ծանու-
ցանելու թէ Աղեքսանդրիոյ Թաղային ընտ-
րութիւնները տեղի պիտի ունենան այս
օրերս:

Ն. Վսեմութիւն Պօղոս փաշա Նուպար,
որ քանի մը օրէ ի վեր անհանդիստ ըլ-
լալով իր յարկաբանինէն դուրս չելլեր, ին-
չազգայու հրահանգ տուած է Գեր. Ա-
ռաջնորդին որ ընտրութիւններու ձեռնար-
կէ, նոյն իսկ եթէ ինքը, այսինքն փաշան,
իր կամքէն անկախ պատճառներով ստիպ-
եալ ըլլայ Աղեքսանդրիայէն բացակայ
գտնուելու:

— Ն. Վ. Տիգրան փաշա բարեհաճած
է մէկ օրինակ «Փարոս» նուիրելու քաղա-
քիս Գերմանական հիւանդանոցին, հոն
գտնուող հայ հիւանդներու տրամադրու-
թեան տակ դրուելու համար:

— Պաշտոյ ազգային լրագրիւններէն կը տե-
ղեկանանք ցաւալի մահը Ստեփան փաշա
Ապանեանի:

Ազգային գործերովը հանրածանօթ Հան-
դուցեալ փաշային վրայ կենսադրական յօդ-
ուած մը զրկած է Թերթին Տեար Ն. Ա-
ղազարմ, զոր մեր յաջորդ թուով պիտի
հրատարակենք:

ԿԱՐՄԻՐ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ. — Այս
խիստ հետաքրքրական թատերախա-
ղը որ բանիցս յետաձգուեցաւ...
Ընդհանուր Ժողովոյ նիստին պէս,
վերջնականապէս տեղի պիտի ունե-
նայ վաղը գիշեր Պէնթանի խումբին
կողմէն Ապտիլ-Աղիլի թատերին մէջ:
Տոմսակները ամբողջովին սպա-
ռած ըլլալով, երեկոյթը յաջողու-
թիւն մը պիտի ըլլայ անշուշտ:

Ճանչնար բոլոր այս երկիրը... եթէ ճանչ-
նայիք, այսպէս չպիտի խօսէիք: Ձեր մէջ,
(ձեր գրեթեբոլոր մէջ կարդացե՛ր եմ) երբ
ազնիկ մը կ'ամուսնանայ, գեղեցիկ երիտա-
սարդ մը կ'ընտրէ եթէ գործին այնպէս
կուլայ, հարուստ մը կ'ընտրէ՝ եթէ փա-
ռասէր է, ամուրի կը մնայ վերջապէս եթէ
իրեն ներկայացուած անձերը չեն կրնար
հաճել ըլլալ իրեն. և երբեք մէկը չի ըս-
տիպեր գիրենք, չի բռնադատեր. ամեն բա-
նէ առաջ իր անձին ազատ է, ազատ է
իր գործընտրութիւնը, իր սրտին վերաբերեալ բա-
նեւորուն մէջ:

Հոս, բոլորովին տարբեր է. այսպէս,
նայեցէք, ահա հանրաւոր որ զիս որդեգրեց,
որ զիս կը սիրէ, այնպէս չէ, կամ այնպէս
կ'երեւայ, և որ պէտք էր որ իմ երջանիկու-
թեանս պատճառ ըլլար, որովհետեւ ատոր

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԵՆ

ԱԹԷՆԻԿԻ ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Ա-
թենքի կղերական Թերթ մը հետեւեալ կեր-
պով կը ներկայացնէ Եկեղեցիին տեսու-
թիւնները Ս. Գրոց Թարգմանութեան վե-
րաբերմամբ:

«1. — Արեւելի ուղղափառ Եկեղեցին
զինուորապէս, և ի մասնաւորի Ն. Պօղոս
եկեղեցին, թէպէտեւ Ս. Գրոց պարունակու-
թեան ժողովրդին հաղորդուելուն պէտքը
յայտնի կերպով չը ճանչնայ, սակայն եր-
բէք չէ վստահած այսօրուան ժողովրդական
բարրապիս մէջ եղած բառական Թարգմա-
նութիւններուն արմէքին և օգտակարու-
թեանը վրայ և որ աւելին է, ուրացած և
զատապարտած է այդ Թարգմանութիւնները,
որոնց մէջ նուիրական բնագիրը ծաղուած
է կամայալարուած, կամորոնք՝ տեսակ մը
կրօնատարածութեան գործիք մը դարձած են:

«2. — Ուղղափառ Եկեղեցին և յոյն ուղ-
ղափառ ազգը, յունական լեզուով իսկ գրուած
նուիրական բնագիրը Ս. Առաքելներէն
իսկ ստացած ըլլալու բացառիկ շնորհը
ունենալով, մենք, արդի ուղղափառ յոյներու
մասնաւոր յարգանք մը ունենալու ենք բը-
նագրին համար, եթէ չենք ո զեր որ ամ.
բաստանեն զմեզ թէ՛ այս առթիւ ալ աչ-
քերնիս քոց կ'ընդունինք ինչ որ տեղի կու-
նենայ ուրիշ աղբրու մէջ, որոնք բոլոր-
ովին տարբեր կապ մը ունին նուիրական
բնագրին հետ»:

ԱԹԷՆԻԿԻ Հասած հեռագիր մը կ'ըսէ
թէ՛ Քորթ ուսուցիչը Գէթսեմանիի մէջ ձե-
ռագիր մը գտած է, առաքելական և հոռ-
մէական Եկեղեցիին հիմնադիր Ս. Պետրո-
սի ձեռքով գրուած ամբողջովին:

Այս յանկարծական գիտքը հաւատա-
րապէս թէ՛ խանդավառութիւն և թէ՛ հե-
տաքրքրութիւն յառաջ բերաւ կրօնական
նեւրու և գիտնականներու աշխարհին մէջ:

Նոր մանրամասնութիւններ կ'ընդառուին
այս գիտնի մասին, որ թուական մը պի-
տի բանայ վերնագրական գիտութեան մէջ:

ՄԻՍ ՍԹՈՒՆԸ ՄԵՌՈՒՄԸ ԶԷ. — Կ'ըս-
ուի թէ՛ Միս Սթոն և իր ընկերակից Ռի-
լօի վանքը կը գտնուին ողջ և առողջ՝ ուր
կ'ընդառնեն իրենց ազատմանը:

ՅՐԱՆՍՈՒՄ ԺՕԶԻՖ կայսէր գեմանի-
խանականներու կողմէ պատրաստուած զա-
ւաճանութեան մը մասին շրջագայած լու-
րերը անհիմն են:

ՔԻԻՐՏԻՍՏԱՆԻ կացութիւնը երթալով
աւելի մոտաւորութիւն կը պատճառէ:

Անուամբ բոլոր պաշտօնական հեռագիր-

համար էր որ ընտանիքին ձեռքէ՝ առաւ
զիս, լաւ ուրեմն, առանց ինծի խորհուրդ
հարցնելու, առանց իմացնելու, երկ կը
կանչէ զիս ուրիշ երկու հոգիի հետ, եր-
կու գերուհիներ զոր կը ճանչնայ, Ուար-
տան ու Չէնապը. վար կ'իջնենք, և մեծ
սրահին մէջ, ուր կը կատարուին բժիշկին
պայցեկութիւնները, երեք կին կը գտնենք,
(երկու հարուստ Արաբ կիներ և շատ տղեղ
թրքուհի մը. զիս Թրքուհիին կը տանին):

Այդ կիները մեզ կը շօշափեն, ասոցին
կը դարձնեն անդին կը դարձնեն, կը հար-
ցափորձեն, և երեկոյին ինծի կ'իմացնեն որ
այդ տղեղ պտուղը՝ որ մեկնած ատենը
զիս համբուրեց, ամուսնոյս հօրաքոյրն է...
Արդ, գիտէք քանի տարեկան է ամուսի-
նը... վաթսուս երեք տարեկան, օրիորդ,
ես ըսես, տասնութեց տարեկան եմ... Երբ

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՑԵԴԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ՁԱՊԹԻՅԷԻ ՇԷՆԲԷՆ ԴԷՄ

ները կը հաստատեն թէ՛ Բիւրոս յեղափոխականները փոքր Ասիայ բոլոր նահանգները կ'աւերեն: Տեղական իշխանութիւնները բարեկարգութիւնը պահելու անկարող են:

Բացարձակապէս անհրաժեշտ է ուրիշ զօրութեան մը դիմել, և կը հաւատեն թէ՛ Ռուսիա և Անգլիա տեսութիւններ փոխանակած են այս պատեհութեան առթիւ:

ԻԶՄԻՐԷՆ կը հեռագրեն թէ՛ մարտային պահանջան մը հրապարակ հարուած մը պարպել է Իզմիրի աստիճանական փոխ-հրապարակական վրայ, որ ծանր կերպով վերադարձեր է:

Տեղական իշխանութիւնները ընտելեան մը ձեռնարկեցին և Կ. Պոլսոյ առարկական զեւթանը բոլոր բարձր և զոհացում պահանջեց:

Դեռ չի գիտցուի թէ՛ ինչ պահանջներ առթեցին այս ոճրագործական արարքը:

ՍՈՒԼԵԱԼ ԹՐԻՈՒԶԻՆԵՐԸ.— Տաճիկ կառավարութեան կողմէ թաշկաւորեալ հարեւարու կիներ, Դիկտեմբեր 4ին Բ. Դըրան գրասենեակներուն առջև հաւաքուելու և արքունիքով ու ճիշդով խնդրելու են որ յետաձգուած ամաթոշակները վճարուին: Մեծ Եպարքոսը թիկնապահի մը միջոցով ըսել տուիւ է իրենց որ աստիճանային պիտի կտրէ եթէ շարունակեն աղմուկ հանելու: Այս սպառնալիքին վրայ մեկնելու են:

ՍՈՒԼԵԱԼ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Դուրը պետութեանը ուղղութիւնը ծանօթագործող որ մօտեցնէ պիտի հրատարակուի, պիտի բողոքէ օսմանեան կայսրութեան ներքին գործոց մէջ օտար միջամտութեան գէմ, պատճառելով որ այդ միջամտութիւնը արգելք կ'ըլլայ Սուլթանին Պերլին դաշնագրին պահանջած բարեփոխութիւնները ներմուծելու:

ՖՐԱՆՍԻՅԱՆ ԳՈՆԿՈՒՄ ընդհանուր կառավարիչը հեռագրեր է ծովային նախարարութեան թէ աղաղակ խաղաղութեան մասին վերջերս շրջագոյութեան դրոշմ լուրերը անհիմն են և թէ ոեւ խոստովութիւն տեղի ունեցած չէ երկրին մէջ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Երեքշաբթի օր ցորեկուան ժամը 4 ու կէսին Ե. Բ. Խոսիվը Լուրսոյ հասարակական շոգենաւով: Նորին Բարձրութիւնը գիշերը նաւուն վրայ անցուց և չորեքշաբթի առաւօտ ժամը եօթին մեկնեցաւ մասնաւոր կառավարմամբ:

Խոսիվական կառավարմամբ Գահիրէ հասաւ չորեքշաբթի իրիկուն ժամը 9ը 40

է, տեղի, հիւանդակի, գույք ժանտաքարոյ ալ, և ահա այդ մարդու վաղապէս հաղալիքը ըլլալու, իր աղախինը, իր դրօշանքը և իր գերին ըլլալու համար է որ զիս պալատէն կ'ուզեն հեռացնել:

Իրաւունք չունին բողոքելու, հարցուց ժերմէն, կուզեն որ հանրմէն սիրտը ի զուժ շարժելու մասին օգնեմ քեզի: Խօսիվ հետք. զիտես որ կը սիրեմ քեզի, թէ ա. մենայնի պատրաստ եմ քեզի ազնկութիւն ընելու:

—Ո՛հ, թոթովեց աղջիկը որ սկսած էր հեծկալաւ, եթէ կամենայ, օրիորդ, եթէ կամենայ...:

—Ինչ պէտք է որ ընեմ, մըջեց ժերմէն, կ'երգնուի քեզի որ բնաւ և ոչ մէկ բանէ չեմ բնկրկիր այդպիսի վատութեան մը կատարուիլը արգիլելու համար:

անցած: Պապ-Է-Հատիտի կայարանը Խըւաիվ բարեկէտ է: Եւ ինչ Խոսիվական գերդաստանի իշխանները, նախարարներն ու բարձրաստիճան պաշտօնեաներ, թիկնաթիւթի 24 հարուած նետուեցաւ Խոսիվիկի ամրոցէն:

Յետոյ կառավարմամբ մեկնեցաւ զէպի Բուպպէ, ուր հասաւ ժամը 10ին:

—Ե. Բ. Խոսիվը հինգշաբթի առաւօտ Բուպպէ անցուց: Իրիկունը Ապտինի պալատը եկաւ ուր տեղի ունեցաւ Բամադանի առաջին իճթուրը, որուն հրաւիրուած էին իւլէմաները:

—«Նաշիօնալ Պանք օֆ Էնթրթ»-ի ստացած մէկ հեռագիրը կ'ըսէ թէ Ալեքսանդրիոյ 112,800 անգլիական ոսկիի փոխառութիւնը որուն ստորագրութիւնը չորեքշաբթի օր ժամը 4ին դրոշմը է, ամբողջութիւն հաւաքուել է Լոնտոն:

—Ապտէ Գատեր փաշա Հիլմի հինգշաբթի առաւօտ ժամը 3ին խորհրդի կանչել է Կալլինի փաշա Ֆէհմի, Սաքաբինի փաշա, Ժօզէֆ պէյ Գալթիօնի և ուրիշ երեւելիներ՝ կազմելու համար յանձնարարմամբ որուն պիտի յանձնուի Խոսիվին դահակալութեան 10րդ. տարեկարձին առթիւ յունուար 8ին կատարուելիք հանդիսից հոգը:

—Գատաստանական խորհրդական Պ. Խիլմէ մինչև Աստան պիտի երթայ Վերին Եգիպտոսի տեղական գաւառականներուն իր տարեկան ընտելութիւնը կատարելու համար: Իր բացակայութիւնը երեք շաբաթ պիտի տևէ:

—Տօք. Բինչինկ փաշա՝ Լուրսոյ հասարակական Եգիպտոսի մէջ կատարած ընտելական պտոյտին միջոցին: Ե. Բ. Խոսիվը մասնաւոր ունկնդրութիւն չնորհեց Առաջնապահական վարչութեան անօրէնին:

—Վիկտոր փաշա չորեքշաբթի օր Հալֆա հասաւ: Երկայն հեռագիր մը ուղղեց Խոսիվին Բամադանի առթիւ, վերանորոգելով իր և Սուսանի ժողովրդին չնորհակալութիւնները այցելութեան համար դոր Նորին Բարձրութիւնը հաճեցաւ իրեն տալ:

—Հանրային գործոց վարչութիւնը որոշեց առաւօտայն կամուրջ մը կառուցանել Նէֆիշ ջրանցքին վրայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԷՅՔԹԱՌՈՒՆ, 10 ԴԵԿՏ.— Մարից հրամանատարը ստուար վաշտի մը զուլը անցած երեք անգամ յարձակեցաւ Գալլի-Նիայի հիւսիսային կողմը գտնուող ցորենի ամբարանոցի մը վրայ որ ըսան հոգիէ

Սթա Ապուհա կանգնեցաւ, ու իր բաբկամուհայն նուրը մէջքին փարեցաւ:

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ... աղէկ գիտէի որ ձեր Սթա Ապուհան պիտի ազատէր, որ արիւնը կուտայ ձեզի համար. և ընտելիքիդ այլ շատ պարզ բան մըն է, մտիկ ըրէք. բառ մը եթէ ըսէք փաշային, մի միայն բառ մը, և կը տեսնէք որ ապագայ ամուսինս ալ, իր ահեղի հօրաբոյրն ալ, ամենքն ալ ինքնակոչ աներեսներու պէս կը ըսուին, կը վնասուին կ'երթան:

—Իրաւ կ'ըսես, ըսաւ զեռահասակ աղջիկը մտախոհ:

—Փորձեցէ՛ք ու տեսէք, պատասխանեց Սթա Ապուհա բարձրագույն, բերկրութեամբ պայծառափայլ:

—Լաւ, ըսաւ ըրջութեամբ դաստիարա-

պաշտպանուած էր: Այս յարձակումները տեղի ունեցան նոյեմբեր 27 և 4 դեկտ.: Յետոյ Պօլսոյ գործող 16 հոգի մեռան կամ վիրաւորուեցան, եւ ըստեղծեցան: (Ռ) **ԼՈՆՏՈՆ, 11 ԴԵԿՏ.**— Լուրս Բիչինը հետեւալ հեռագիրը ուղղած է Պատերազմական Նախարարութեան:

Բրիթանիա, 11 Դեկտ.— Դիշերային չուէ մը ետքը զօրավար Պրիւս Համիլթոնի զօրքերը Պէթէի զօմանտօին վրայ իսկան և կոխէ մը ետքը զայն ամբողջովին զբաւեցին: Եթե Պօլսոյ սպաննուեցան և 134 հոգի զերի բռնուեցան: Կ'ըսեն թէ Լուի Պօթա մեծ զօմանտօն մը վրայհէյտի հիւսիսային արեւելեան կողմը կը գտնուի: (Ռ)

ԱՌՆԵՔ, 11 ԴԵԿՏ.— Կառավարութիւնը ծանուցած է Մահմուտ Տամատ փաշայի՝ որ Բորֆու կը բնակէր թէ Յունաստանի հոգէն մեկնելու էր: (Հ)

ԼՈՆՏՈՆ, 11 ԴԵԿՏ.— Շաքարի գեսպանադուրին անգլիական պատուիրակներն են Պրիւսիայի բրիտանական դեսպան Պ. Ֆիլս և հնդկական գաղթականութիւններուն արտաքին գործոց նախարարութիւններուն ներկայացուցիչները:

ԲՐԷՏՈՐԻԱ, 12 ԴԵԿՏ.— Այս վերջին ժամանակներս պատերազմին դաշտին վրայ գտնուող Պօլսոյ զօրքերը յաճախակի գուժարումներ ունեցան: Շատ մը նշաններէ յայտնի կը տեսնուի թէ Պօլսոյ երթալով աւելի հակամէտ են անհատապէս անձնատուր ըլլալու: Երէկ, 14 Պօլս Սթան, տէրթոնի մօտ հպատակներ են: (Ռ)

ՎԱՇԻՆԿՏՈՆ, 12 ԴԵԿՏ.— Խորհրդը, զարանին մէջ Պ. Լոտճ յայտարարեց թէ նոր դաշնագրին համաձայն Մեծն Բրիտանիա Միացեալ Նահանգներուն թողուցեր է ջրանցքին վարչութիւնը խաղաղութեան ինչպէս նաև պատերազմի ժամանակ, ամբողջութեամբ կառուցանելու: Իրաւունքով: (Ռ)

ԲՈՐՈՒՄ, 12 ԴԵԿՏ.— Խորհրդարանը կը վիճաբանի կրօնական արարողութիւններու ելմտացոյցին ջնջմանը մասին: (Հ)

Կ. ՊՈԼԻՍ, 12 ԴԵԿՏ.— Միւսիք փաշա Բարիկ մեկնեցաւ իր պաշտօնին զուլը անցնելու համար: (Հ)

Ա. Զ. Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԷՏԷՐ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշ-

կուհին, այս երեկոյ իսկ կը խօսիմ փաշային:

Բայց փաշան, իբրեւ թէ գուշակած ըլլար, այս վայրէտանիս ինքն իսկ երեցաւ զասի սենեակին դրանը առջև:

Մինչդեռ Սթա Ապուհա, բերկա պատար, կը փախչէր, ժերմէն առաջ անցաւ յանկարծահաս զարմանքէն բողբոլման վարդաւարմիր:

—Ինձի հետ խօսելի՛ք ունիք, փաշա:

—Բայց... գործերնուդ արգելք ըլլաւ...:

—Ոչ, փաշան գիտէ որ միշտ բարի է գալուստը. ու աղջիկը կը հապճեպէր, աթոռ մը կը հրամցնէր՝ անսեղանեթ վեհուլեամբ մը, շրթունքներուն վրայ ծպտումով մը, և բերեղահոգն ձայնը թնթիւն ինչ զողջուն. յետոյ հարցուց:

—Ինչ կը փափագէք, փաշա:

նակի դասեր տալ, նորագոյն մէթոտով, իրեն գիմող ուսուցիչաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մահարեանի գրասենեակը, Պապ-Է-Հատիտ փողոց թիւ 31:

10—20

ՏԻԿԻՆ Է. Ա. ԱՐՄԱՆԵԱՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս գերձակուհին պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ յաճախորդներուն ինչպէս նաև յարգող հաւատարկութեան թէ՛ այս անգամ իր Պապ-Է-Լուրս աքթիլին փոխարեւած է Պապ-Է-Հատիտ փողոց Տէպանէի նորաշէն տան մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթըմանը:

6—10

ՈՒՌԸՐ ԵՒ ՄԵՅՄԱՐԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԲԱՍՔԱԼ

Տ.

Մեր երկու ճիւղերը միացուցած և մեր միջերանցները ընդարձակած ըլլալով, պատիւ ունինք ձեռն խընդրելու որ բարեհաճէք ձեր այցելութեամբ պատուել, Դեկտեմբեր 14 եւ սկսեալ, մեր հաստատութիւնը, տեսնելու համար մեր գեղարուեստական պղնձ և բրածոյէ գեղունքներ զորս ստորագրած են 1900ի և 1901ի Բաւրիկի աւաթնէն վարձատրուած արուեստագէտներ:

Այս ամեն առարկաները որոնք մէյմէկ զուլս-գործոցներ են, այցելուներու զննարկումը պիտի գրաւեն: Մեր յաճախորդները պիտի գտնեն նաև մեր խանութներուն մէջ գեղեցիկակերտ սիրուն կարասիներ և ըստ վերջի նորաձեւութեան խել մը կանաչի և ծրունդի նուէր ըլլալու արժանի նիւթեր:

Այս առթիւ կը յիշեցնեն նաև թէ մեր ըով պիտի գտնէք ճոխ հաւաքածոյ մը Գրիսթօֆի արծաթեղէն սպասներու որոնց միակ ներկայացուցիչն ենք հոս:

Հաճեցէք ընդունել Տ մեր յարգանաց հաւատարմութիւն:

ՈՒՌԸՐ ԵՒ ՄԵՅՄԱՐԱՔԻ ԼԻՄԻԹԸՄ

Ան չէր արտօրար պատասխանելու, կը նայէր անոր, այնչափ շնորհալի իր պտոյտի զգեստներովը, գուլթը քիչ մը հակած, կարծես ծոցով մաղերուն շատ ծանր բոլին տակ, որոնք՝ հակառակ իր հոգածու ջանքերուն, շարունակ դուրս կը փախչէին անդուստ ծածկերով, փողոշուկին (flet) թեւերը կը փրցունէին, կը թուլցնէին գնդասեղները որ չէին կրնար այդ հոծ վարսերը ամփոփել:

Աղջիկը այս պահուս միայն Սթա Ապուհան կը մտածէր. իրեն մէջ եղած պաշապանութեան սաստիկ պէտքը, անձնութեան թեան այն ծարաւը որ, մատաղ հասակին մէջ, հայրենիք ու ընտանիք թողուլ տուած էր իրեն՝ այնչափ հեռուները երթալ իր պատիկ քոյրերուն հացը ճարելու և անոնց դուզնաքնայ օժիտը պահպանելու համար, հիմա ամենայն սաստկութեամբ համակած էին զինքը:

(Շարունակելի) Թարգմ. Յ. Սեթեան

Գ. Է. ՄԵԼՎԱՃԵԱՆ

ԳՈՂԶԻՐԷ - ՄՈՒՍՔԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՏՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ֆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻՄԵՏ 563 ՄԻԼԻՄԵՏ 961 ՀԱՅԱՐ ՖՐԱՆՔ

Ապահովագրական ամեն կարելի դրուիւնները կը գո ծաղիւն. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՖԻ սակագիրներ և ապահովագրութեան զանազան դրուիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՐ, Ընդհ. ներկայացուցիչք:
Այլեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւոր: Գ. ԵԿԱՒՈՅ ԴԵՐ-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱՄԱԳՆԱԿԱՆ 200,000,000 ՖՐԱՆՔ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 8 ԵԳԻՊՏՈՍ

ԱՆԵՔՍԱՆԳՐԻԱ-ԳԱԼԻԻԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանան ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կ'ստայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր:

Աւանդ ձեռնած դրամներուն փոխարէն կ'անորոշ պայմանաւած մասով մուտքաներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Այն շորեքաթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրէ, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱլեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ՄԱՆՈՒՄ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրէ

ընկ հանդիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Այն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱլեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնընչից օրը քնքած մը՝ երթեւեկ կարմիր

Միկոյն հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Ալեքսանդրիայի, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գիւրի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՆԱՐ-ԴՈՐՈՒՄԱՏԱՐ

ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՏԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և չընկաններէն կ'ընդունուին Գոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուիկի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական Բրէտի Ֆոնսիէի, Բոմբէյի երկաթուղւոյ բրոմէսներու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապացրանքները ընդունուին կանխիկ փոխութի միջոցաւ: Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «պօսթառամ պուրսըման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 դր. արժէքով յանձնարարութիւններու համար եգիպտ. 3. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzengatzian

Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց համար:

Չափի վրայ զգեստներ, յաւազոյն պայմաններով:

ՎԵՐՉԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԷՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍԵԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆՈՐԴԷՐՆԻՍ ՆԻՔՈԼԱ. արդթ. թօն. 5500	ՁԻՒԱԶՈՅ տարողութիւն թօն 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	ՁԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկուսւմ Ալեքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՆ ՍԱՅԻՏ, ԶԻՐԻՄ ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ՄՈՎՈՒ ԱՍԻԱՅԸ ԵԶԵՐԲԵՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱԶՈՅԻ ՄՈՎ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկուսւմ Ալեքսանդրիայէն դէպ ի ԲՈՆ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՐՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Այլեքսանդրիա, Թիքսասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էմիլ Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.

Ալեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր և կը ստանան ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՐԱՄԱՐԱՄԱՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, ծրար խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է աշն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալեքսանդրի գեղերու նման չի խանգարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

29—316

Խ. Տ Է Մ Ի Ր Ձ Ե Ա Ն

Ա Յ Ա Մ Ս Ս Ա Ք Ո Յ Ց

ԲԵԱՄԷԼ ԳՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ՇԷՔԸՐՏՈՒ ԴԻՄԱՑ

Ելեքստրական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուպի հիւանդութեանց բուժում. Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, ճանթիկներու ոսկիէ, պլումբոնովէ, քաւոյնովէ: Ապահով և տոկոն թղթաւած ոսկի, բլաթին, ևայլն, ևայլն: Լիւտերու հիւանդութեանց դարմանում ելեքստրական և ուրիշ միջոցներով: